ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 փետրվարի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

12
(3043)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ Է ՏՎԵԼ ԻՐ ԱՇԽԱՏԱԿՑԻՆ ՈՒ ՍՏԱՑԵԼ ՆՐԱՆԻՑ 40 ՄԼՆ ԴՐԱՄ

Վաչագան Ղազարյանը, որը երկար տարիներ եղել է Սերժ Սարգսյանի վարորդապետը, 2017 թվականի օգոստոսին իրեն փոխկապակցված «ՅԱՆՍ» ռեստորանի հաշվապահին բանտ է ուղարկել, ապա նրանից հարկադրանքով խլել է 40 մլն դրամ՝ օգտագործելով իր պաշտոնեական դիրքը:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական բաց աղբյուրներից տեղեկացավ, որ Սուսաննա Արիստակեսյանը 2012-2017 թթ. աշխատել է «Սելենա ՍՊԸ»-ում՝ որպես հաշվապահ: Եվ մի օր՝ աշխատանքի գնալիս, նրան թույլ չեն տվել մտնել աշխատավայր՝ ուղեկցելով Վաչագան Ղազարյանի կնոջ՝ Ռուզաննա Բեգլարյանի մոտ: Վերջինս գոռգոռացել է, ասել, թե Սուսաննան թալանել է իրենց, ու պահանջել է վճարել 40 մլն դրամ:

Իրավապահներին Սուսաննա Արիստակեսյանը հայտնել է. «Տնօրեն Սերգեյ Կարապետյանը եկավ, դուրս հանեց ինձ, չթողեց՝ պարզաբանումներս ներկայացնեմ: Ես Վաչագան Ղազարյանի վճարած 80 հազար դրամ կտրոնը ջնջել եմ, բայց գումարը եղել է դրամարկղում, ինչո՞ւ պետք է 40 մլն դրամ վճարեի: Մի քանի օր հետո ամուսնուս՝ Գրիշա Ղազարյանին, Վաչագան Ղազարյանը կանչեց նախագահի նստավայր. կարճ զրույցի ժամանակ նրան ասել էր, որ պետք է 20 մլն դրամ վճարի իրեն», - հավելել է Սուսաննա Արիստակեսյանը:

«Ես ԱԱԾ-ի տղերքին խնդրել եմ, պարզել են, որ կինդ խաբել է մեզ, ու եթե փողը չտաս, գիտես՝ ինչքան ուզեմ՝ կստանամ, հետո չասեք՝ «գռուզիտ» արեցի», - ասել է Վաչագան Ղազարյանը Բաղրամյան 26-ի՝ ՀՀ նախագահի նստավայրի իր աշխատասենյակում, որտեղ Սուսաննայի ամուսինը մտել է առանց անցագրի՝ հեռախոսային թույլտվությամբ:

Հետո հաշվապահը գրում է, որ իրեն ուղեկցել են «ՅԱՆՍ», որտեղ դիմավորել են Վաչագան Ղազարյանի կինը՝ Ռուզաննան, Սերգեյը, ծրագրավորող Արմենը եւ ԱԱԾ-ից Հայկը:

«Ինձ եւ ամուսնուս նսեմացրել է Ռուզաննան: Ամբողջ զրույցի ժամանակ պայմաններ է առաջ քաշել՝ «Կինդ պետք է ինքնասպան լինի: Պիտի փող բերի տա: Դատվի: Համ դատվի, համ փող տա»: Եվ այդպես հարուցվեց քրգործ ու ինձ ձերբակալեցին (11.08.2017): Առաջին հարցաքննության ժամանակ՝ 14.08.2017-ին, մեղադրանք առաջադրվեց 25 մլն յուրացնելու համար. իմ հարազատների վրա ճնշումներ էին գործադրում: Ի վերջո պլանն աշխատեց, ես գրավի դիմաց ազատ արձակվեցի, բայց իրենց վճարեցի 40 մլն դրամ», - իրավապահներին հայտնել է Սուսաննա Արիստակեսյանը:

Այս հաղորդումը իրավապահ համակարգ ներկայացվել է 5 տարի առաջ, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2018-ին՝ հեղափոխությունից հետո, հարուցվել է քրգործ, Սուսաննա Արիստակեսյանը տուժող է ճանաչվել, սակայն հետագայում այս գործը կարճվել է: Փաստորեն, իր աշխատակցին ճնշելու, գումարներ ստանալու արարքը հայրենի իրավապահները համարում են օրինաչափ:

Անցած տարեվերջին ՀՖՖ նախագահի պաշտոնում ձախողումների մաստեր կլասի հեղինակ Արմեն Մելիքբեկյանն ու իր թիմը հերթական անգամ հայտնվեցին, մեղմ ասած, անհարմար իրավիճակում. անցած տարվա դեկտեմբերի վերջին նա հայտարարել էր, որ Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզչին կներկայացնեն հունվար ամսին: Այս խոստումը եւս չկատարվեց ու մարտի 20-ին նախատեսված անչափ սկզբունքային՝ Հայաստան-Վրաստան խաղից առաջ մենք նույնիսկ գլխավոր մարզիչ չունենք: Իհարկե, Մելիքբեկյանի ու իր թիմի ձախողումների ֆոնին տրամաբանական է, որ դժվար կլինի նորմալ մարզչի համոզել, որ գա եւ գլխավորի հավաքականը, սակայն սա չի արդարացնում այս մարդու հերթական անպատասխանատու հայտարարությունը: Ընդհանրապես, ֆուտբոլային աշխարհի մեր աղբյուրները պնդում են, որ Մելիքբեկյանի կառավարման շրջանը, նրա հեռանալուց հետո, թերեւս կհամարվի հայկական ֆուտբոլի վատագույն շրջանը, երբ մի կողմից սովորական են դարձել տարբեր տարիքային հավաքականների պարտությունները, որոնք որոշ դեպքերում ուղղակի խայտառակություն են հիշեցնում, իսկ մյուս կողմից դուրս են գալիս ոլորտում տարիներ շարունակ ներդրումներ արած գործարարներ, ինչը ֆուտբոլի ապագան ավելի մշուշոտ է դարձնում: Բացի վերը նշվածից՝ ըստ որոշ տեղեկությունների, հայկական ֆուտբոլին սպասվում են սկանդալային բացահայտումներ՝ կապված խաղադրույքների, ինչպես նաեւ խաղադրույքների բիզնեսով զբաղվող ակումբներից մեկի հետ: Հաշվի առնելով մեդիահրապարակումները՝ ենթադրելի է, որ խոսքը կարող է լինել նաեւ «ՆՈԱ» ակումբի մասին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ու իր թիմը մեկնել են Լյուքսեմբուրգ, այնտեղից էլ կգնան Բելգիա, իսկ այս ծախսերի մեծ մասը «հոգացել» է պետբյուջեն: Թե ինչ նպատակով՝ պաշտոնական փաստաթղթերում այդ մասին ոչինչ չկա, բայց փաստ է, որ ԱԺ նախագահի պատվիրակության կազմում ընդդիմադիրներ չկան, ոխերիմ թիմակիցներ չկան՝ այլ ընդամենը 2 ՔՊ-ական պատգամավոր: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ Ալեն Սիմոնյանը փետրվարի 3-5-ը ինքն իրեն պաշտոնական այցով «գործուղել է» Լյուքսեմբուրգ, ապա 6-8-ը՝ Բրյուսել: ԱԺ նախագահի պաշտոնական պատվիրակության 11 հոգանոց կազմում ընդամենը 2 պատգամավորներ կան ՔՊ-ից, մեկը Արման Եղոյանը, մյուսը Սիմոնյանի նախկին օգնական Հասմիկ Հակոբյանը: Մյուսները ԱԺ նախագահի աշխատակազմի աշխատակիցներ են՝ լուսանկարիչ, օպերատոր, մամուլի քարտուղար, արարողակարգի բաժնի մասնագետ ու ղեկավար, արտաքին կապերի վարչության մասնագետ ու ղեկավար, եւ խորհրդական Աշխեն Հայրապետյանը: Թվարկվածներից միայն 5 հոգու ծախս է իր վրա վերցրել Լյուքսեմբուրգը, 6 հոգու գործուղման ծախսերը վճարվել է հերոս հարկատուների միջոցներով: Իսկ Բրյուսելի եռօրյա այցի համար ֆինանսավորումը ամբողջությամբ ապահովվել է հարկատուների հաշվին, եւ պատվիրակությանը միացել է եւս մեկ ՔՊ-ական պատգամավոր՝ Սարգիս Խանդանյանը, ով մեկ օր շուտ է հասնելու Բրյուսել: 12 անձի գործուղման հետ կապված ճանապարհածախսը, ներկայացուցչական ծախսերը, օրապահիկի եւ գիշերավարձի (3 գիշերվա՝ ըստ փաստացի կատարած ծախսերը հավաստող փաստաթղթերի) վճարումը կատարվել (ու) է ՀՀ պետբյուջեի հաշվին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Նիկոլ Փաշինյանն իր երբեմնի ընկերոջ՝ թիմակից Էդմոն Մարուքյանի կնոջը՝ Տաթեւ Մատինյանին, ազատել է աշխատանքից: Վերջինս 2023 թվականին, երբ Մարուքյանը հատուկ հանձնարարություններով դեսպանի «պատվավոր» պաշտոնն էր զբաղեցնում, նշանակվել էր Արբիտրաժի հաշտարարության հայաստանյան կենտրոնի տնօրեն, որը 2023 թվականին էր հիմնադրվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հենց Փաշինյանի հրահանգով Տաթեւ Մատինյանը հեռացվել է զբաղեցրած պաշտոնից: Պատճառն էլ Փաշինյանի մշտական համախոհ Մարուքյանի՝ վերջին շրջանի հակաճառություններն ու ընդվզումներն են իշխանությունների հայտարարությունների ու որոշումների դեմ: Կարելի է ասել՝ Փաշինյանը կնոջ միջոցով պատժել է Մարուքյանին: Հիշեցնենք նաեւ, որ Տաթեւ Մատինյանը «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահն է, որը երբեմն խոսքի ազատությունը սահմանափակող նախագծերով է փորձում հանդես գալ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԻՆՉ ՈՉԻՆՉ ՉԻ ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՒՄ», ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Գյումրու ավագանու մարտին կայանալիք արտահերթ ընտրությունները թեժ են լինելու, թեկնածուների ոլորտում էլ, կարծես, չկա:

Իշխող ուժի թեկնածուն քաղաքապետի ժ/պ Սարիկ Մինասյանն է, որը վերջերս է անդամագրվել ՔՊ-ին: Գյումրու ընտրություններին մասնակցում են նաեւ ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը, ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության նախագահ Կարեն Մալխասյանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Կարեն Պետրոսյանը եւ այլք:

Ընտրություններին ներկայացված հայտ է ներկայացրել նաեւ Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը: ArmLur.am-ը վերջինիս հետ զրուցել է Գյումրիում կայանալիք ընտրությունների եւ քաղաքական ներկա իրավիճակի վերաբերյալ:

-Պարոն Ղուկասյան, ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր մրցակիցներին, ո՞ւմ եք համարում Ձեր հիմնական մրցակիցը:

-Շատ լավ եմ վերաբերվում բոլորին, մեր հայ տղաներն են, հաջողություն եմ մաղթում նրանց:

-ՔՊ-ն, փաստորեն, աղմկահարույց դեպքերից հետո փոխեց իր թեկնածուին՝ Կարեն Սարուխանյանին, ում, ինչպես ասում էիք, չեք ճանաչում: Հիմա իշխող ուժի թեկնածուն Սարիկ Մինասյանն է, որը համայնքապետի պարտականություններն է կատարում: Ի՞նչ է փոխելու սա ընտրությունների վերջնական ելքում:

-Այո, այսօր էլ Սարուխանյանին չեմ ճանաչում, իսկ Սարիկ Մինասյանը վատ տղա չէ, ճանաչում եմ: Այդքանը կասեմ:

-ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը, ով նախկինում մասնակցել է Գյումրու համայնքապետի ընտրություններին, այս անգամ եւս մասնակցելու է:

-Աստված իր հետ, թող մասնակցի:

-Պարոն Ղուկասյան, իսկ Ձեր շանսերն ինչպե՞ս եք գնահատում:

-Կապրենք, կտեսնենք: 30 տարի ինձ քարկոծում էիք, հիմա տեսնենք՝ ինչ կլինի, ճի՞շտ էիք ինձ հետ կապված, թե՞ ոչ: Համբերեք՝ տեսնենք:

-Մենք չենք քարկոծել, պարոն Ղուկասյան, քաղաքացիների դժգոհություններն ենք ներկայացրել:

-Քաղաքացիների անունից ինչ ուզում՝ խոսում եք, կապրենք, կտեսնենք՝ ժողովուրդը ի՞նչ է մտածում: Ես հո Նոստրադամուսը չե՞մ, ասեմ՝ ինչ կլինի. մի քիչ համբերե՛ք:

-Պարոն Ղուկասյան, Դուք նախորդ անգամ մեզ հետ զրույցում մտավախություն հայտնեցիք, որ, հնարավոր է, ընտրություններից առաջ Ձեր նկատմամբ քրեական հետապնդումներ սկսվեն, հիմա՞ էլ կան վախեր:

-Աշխարհ է, ամեն ինչ էլ կլինի: Ես ոչնչից չեմ անհանգստանում, գիտեմ՝ աշխարհում հանդերձյալ կյանք կա:

Հիշեցնենք՝ Գյումրիում կառավարման ճգնաժամ էր առաջացել նոյեմբերից, երբ «Բալասանյան» դաշինքը մանդատները վայր դրեց: Գյումրիում «Քաղաքացիական պայմանագիր»-ը իրականացրեց նախնական ընտրություններ՝ քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար: Ներկուսակցական նախնական ընտրություններում հաղթեց անկուսակցական Սարիկ Մինասյանը, որն ավելի ուշ անդամագրվեց ՔՊ-ին:

Սարիկ Մինասյանը դեկտեմբերի 13-ին նշանակվեց Գյումրու քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՈՎՔԵՐ ԵՆ ՆՐԱՆՔ

110 «ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԱՌՈՒ» ԿՍՏԱՆԱ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

Փետրվարի 1-ից մեկնարկել է անհուսալի վարկառուների աջակցության ծրագիրը, որի համար շահառու է հանդիսանում 218 հազար մարդ:

ArmLur.am-ին աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից փոխանցեցին, որ երեկվանից «անհուսալի վարկառուներից» ստացվել է 350 դիմում, որից 110-ը համապատասխանել են ծրագրի պայմաններին, եւ նրանց դիմումները հաստատվել են: 240 դիմումատուների դիմումների մերժման պատճառը ծրագրի պայմաններին չհամապատասխանելն է:

Այսպիսով՝ ArmLur.am-ը ներկայացնում է՝ ովքեր եւ ինչպես կկարողանան օգտվել վարկերի մարման ծրագրից:

Համաձայն Կենտրոնական բանկի կողմից «Ժողովուրդ» օրաթերթին տրամադրած տեղեկության՝ 2024թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ «անհուսալի վարկ ունեցող ֆիզիկական անձ» վարկառուների թիվը շուրջ 341,000 է, իսկ այն վարկառուները, ովքեր դասակարգված են որպես «անհուսալի» եւ համապատասխանում են սահմանված պայմաններին, շուրջ 218 հազար են: «Անհուսալի վարկեր» ունեցող անձանց ոչ ֆորմալ զբաղվածությունից դուրս բերելու եւ նրանց տնտեսական ակտիվությունը վերականգնելու նպատակով՝ 2025 թ. փետրվարի 1-ից Հայաստանում գործարկվում է ծրագիր, որի համաձայն՝ պետությունը պատրաստ է աջակցել «անհուսալի վարկ» ունեցողներին մարել վարկը՝ աշխատավարձից գոյացող եկամտահարկն ուղղելով վարկի մարմանը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից ArmLur.am-ը տեղեկացրել էր, որ ծրագիրը, որն իրականացվում է ԱՍՀ նախարարության կողմից եւ որի նպատակը «անհուսալի վարկեր» ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանումն է, ընդգրկում է վարկային պարտավորություն ունեցող այն անձանց, ում ունեցած բոլոր վարկերի մայր գումարների հանրագումարը, դիմելու օրվա դրությամբ, փոքր է 1 մլն դրամից, եւ այդ վարկերը դասակարգված են «անհուսալի» դասով առնվազն 3 տարի:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, թե «անհուսալի վարկառու» դարձածներից քանիսն աշխատանք ունի, եւ որքան գումար է հատկացվելու վարկեր ունեցող անձանց աջակցելու համար:

Նախարարությունից փոխանցել էին, որ «անհուսալի վարկառուների» մինչեւ 20%-ն ունի ֆորմալ զբաղվածություն. մնացածը կամ չունեն աշխատանք կամ գտնվում են ոչ ֆորմալ զբաղվածության մեջ: Նախագծի հիմքն այն է, որ ոչ թե պետությունն է բյուջեից գումար հատկացնում, այլ անձի աշխատավարձից է այն փոխանցվում: «Բռնագանձվող գումարի չափը մինչ այս նախագիծը 50 տոկոս էր: Այս որոշմամբ 50 տոկոսի փոխարեն կսահմանվի 20%՝ 24 ամիս ժամկետով»,- ասված է «Ժողովուրդ» օրաթերթի հարցերին ի պատասխան: Փետրվարից գործարկվող ծրագրին կարողանալու են դիմել նրանք, ովքեր ունեն գրանցված զբաղվածություն: «Անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման ծրագիրը չի իրականացվելու մյուս հարկատուների հաշվին, այլ տվյալ անձն աշխատելու է եւ իր վարկի մարման աջակցության չափը կազմելու է իր իսկ աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկի գումարի չափով»,- փոխանցում են նախարարությունից: Այսինքն՝ պետությունն այլ գումար չի ուղղելու անհուսալի վարկի մարմանը, այլ այն՝ ինչ որպես եկամտահարկ կգոյանա տվյալ անձի աշխատանքի դիմաց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ ԿՏԵՂԱԴՐՎԵՆ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանն առաջարկում է օդանավակայանների մուտքերի, ելքերի եւ պետական սահմանի անցման կետերի հատվածներում տեսախցիկներ տեղադրել: Պատգամավորի հեղինակած «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխությունների նախագծում ասվում է, որ տեսախցիկները պետք է տեղադրվեն նախագուշացնող՝ «Տարածքը գտնվում է ՆԳՆ տեսանկարահանման գոտում» գրություններով:

Առաջարկվում է նաեւ ոստիկանությանը հասանելիություն տրամադրել օդանավակայանների անվտանգության ծառայությունների տեսադիտարկման սարքերին, ինչպես նաեւ ցամաքային անցակետերում ուժային գերատեսչությունների տեսախցիկներին:

Որպես հիմնավորում՝ ՔՊ-ական Հայկ Սարգսյանը նշել է ահաբեկչության սպառնալիքը, թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները եւ մարդու կյանքին ու առողջությանը, պետության անվտանգությանը սպառնացող մի շարք այլ հանցագործությունների աճը:

Նախագիծը հաջորդ շաբաթ կքննարկվի Ազգային ժողովի քառօրյա նիստերին:

Ավելի վաղ Հայկ Սարգսյանն առաջարկում էր տեսախցիկներ տեղադրել հանրային վայրերում, սակայն ներքին գործերի նախարարությունը կասեցրեց այս նախագիծը:

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԻՆ» ԱԱԾ–Ն ԱՐՏԱՔՍԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

«Օրենքով գող» Արման Ջանինյանին ԱԱԾ-ն արտաքսել է Հայաստանից: Փաստաբան Արայիկ Պապիկյանը ուշագրավ մանրամասներ է հայտնում դեպքից: Հայտնել էինք, որ Արթուր Սուրենի Աղվանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մասնակցելով քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գող» կարգավիճակ ունեցող Արման Ջանինյանի կողմից ղեկավարվող քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման նպատակով, Արման Ջանինյանի հանձնարարությամբ, 2023-2024 թվականների ընթացքում՝ տարբեր ժամանակահատվածում, իրականացրել է դրամական միջոցների հավաքագրում, ինչի արդյունքում ձեռք բերված անօրինական եկամուտը տնօրինվել է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գող» կարգավիճակ ունեցող Արման Ջանինյանի կողմից եւ ուղղվել ՀՀ-ում գտնվող տարբեր կալանավայրեր: Ծնունդով Հայաստանի Ալավերդի քաղաքից Արման Ջանինյանը, ով քրեական աշխարհում հայտնի է «Արման Կալուժսկի» մականունով, «օրենքով գող» է կարգվել 1996 թվականին Մոսկվայում՝ կալանավայրից դուրս գալուց հետո:

ՍՊԱՌՆԱԼԻՔ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՆ

Ադրբեջանի վարած ծավալապաշտական քաղաքականությունը սպառնալիք է ոչ միայն ՀՀ-ի, այլ նաեւ տարածաշրջանի այլ պետությունների համար: Այս մասին հայտնել է ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը: «Ադրբեջանի ՊՆ-ի հետ փոխկապակցված Caliber.az կայքի տեսանյութը հերթական անգամ խեղում է տարածաշրջանի ողջ պատմությունը, ընդ որում՝ նպատակ հետապնդելով արտահայտել տարածքային հավակնություններ ոչ միայն ՀՀ-ի, այլեւ Իրանի նկատմամբ: Սա զուտ քարոզչություն չէ, որ արհամարհենք, սա պետական քաղաքականություն է: Այն, որ Թավրիզը ներկայացվում է որպես հին ադրբեջանական քաղաք, առկա է նաեւ ադրբեջանական դասագրքերում, այն, որ ՀՀ տարածքը ներկայացվում է որպես «Արեւմտյան Ադրբեջան» եւս կա դասագրքերում, նաեւ պետական գերատեսչական կայքերի քարտեզներում, որոնց մասին պարբերաբար խոսում եմ: Ուստի ես մնում եմ այն համոզմանը, որ Ադրբեջանի ղեկավարության վարած ծավալապաշտական քաղաքականությունը սպառնալիք է ոչ միայն Հայաստանի, այլեւ տարածաշրջանի այլ պետությունների համար եւս, ուղղակի Հայաստանը «հարմար» թիրախ է, Իրանի հարցում Ալիեւը ռիսկ չի անում հոխորտալ, բայց իր քաղաքականությունը, միեւնույնն, է առաջ է բրդում տարբեր մեթոդներով»,-նշել է նա:

ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ներքին գործերի նախարարության Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունը նոր ղեկավար ունի: Այս մասին ArmLur.am-ին հայտնեցին ՆԳՆ-ից:

ՀՀ ՆԳՆ Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունը նոր ղեկավար է նշանակվել Հայկ Հարությունյանը: Նշենք, որ Հայկ Հարությունյանը մինչ այս զբաղեցրել է Երեւան քաղաքի դատախազության ավագ դատախազի, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի, Երեւանի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների, Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնները, աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես սահմանադրական եւ օրենսդրության վարչության պետ, մինչ այդ էլ՝ ԱՆ այլ պաշտոններում, 2014 թվականին եղել է ՀՀ արդարադատության նախարարի խորհրդականը:

Հարությունյանը դասախոսել է Ֆրանսիական համալսարանում, 15 գիտական հոդվածի հեղինակ է, իրավաբանական գիտությունների թեկնածու:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ «ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ» Է

ՆՎԵՐ՝ ՌԴ-Ի ԴԵՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ կոչ ֆենադատություններից հետո, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին Հյուսիսային Եվրոպայի եւ Բալթյան երկրների հետ խորհրդակցությունից հետո Ֆինլանդիայի Խորհրդարանի նախագահը թանկարժեք հուշանվեր է նվիրել: Հիշեցնենք, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հունվարի 24-ին բալթյան երկրների խորհրդարանականների հետ ունեցած դռնփակ հանդիպման ժամանակ արտահայտել էր կոչ ֆենադատություն Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ, որը տարակուսանք էր առաջացրել անգամ բալթյան երկրների ներկայացուցիչների շրջանում: Ալեն Սիմոնյանը, բալթյան երկրների ներկայացուցիչների հետ ունեցած փակ հանդիպման ժամանակ, հայտարարել էր, թե Ռուսաստանը պետք է պարտվի, վերանա, որպեսզի մեր եւ բալթյան երկրների համար «լավ լինի»: Սիմոնյանը նաեւ ավելացրել է, որ Ռուսաստանի կործանումը կարող է Հայաստանի եւ բալթյան երկրների համար «լավ հեռանկարներ» բացել»:

Այս հայտարարություններից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողների նվերների հաշվառման ձեւաթղթի» համաձայն՝ Ալեն Սիմոնյանը Հայաստան է եկել հուշանվերով, այն է՝ «Ապակե թռչուն» կապույտ գույնի հուշանվեր, որի արժեքը կազմել է 120 հազար ՀՀ դրամ:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

1. պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

2. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

3. կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

4. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Բացի այդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում:

40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման՝ բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի:

Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

Հավելենք նաեւ, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ, չեն կարող ընդունել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԵՍՊԱՆ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

ՀՀ նախագահը հրամանագիր է ստորագրել, ըստ որի՝ Իննա Թորգոմյանը նշանակվել է Կիպրոսի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան: Հիշեցնենք, որ Տիգրան Մկրտչյանը հետ է կանչվել Կիպրոսի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

ԾԱԽՍԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

Երեւանում կառավարական առանձնատների սպասարկման արժեքը կրկին ավելացել է: Ընթացիկ տարում այդ նպատակով հատկացվել է ավելի քան 621 մլն դրամ (1,56 մլն դոլար): Սպասարկման ծախսերը 2024 թվականի համեմատ ավելացել են մոտավորապես 18 մլն դրամով (2024թ. այդ ծախսերը կազմել են շուրջ 603 մլն դրամ): 2023 թվականին սպասարկման համար հատկացվել էր 542 մլն դրամ, 2022 թվականին՝ շուրջ 470 մլն դրամ:

ԿՄԵԿՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, հնարավոր է, մինչեւ Ռամադանի սկսվելն այցելի Սիրիա: Turkiye թերթի փոխանցմամբ՝ Սիրիա այցի հրավերն Էրդողանը Սիրիայի անցումային շրջանի նախագահ Ահմեդ ալ-Շարայից կստանա Անկարայում անցկացվելիք բանակցությունների ժամանակ: Բանակցությունների եւ երկու երկրների կառավարությունների համատեղ հանդիպման արդյունքում ակնկալվում է, որ կարեւոր պայմանագրեր կստորագրվեն տնտեսության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում: 2025 թվականին Ռամադանը սկսվելու է փետրվարի 28-ի մայրամուտին եւ կշարունակվի մինչեւ մարտի 30-ը:

ՄԱՀԱԿՆԵՐՈՎ ՀԱՐՎԱԾԵԼ ԵՆ

Ահազանգ է ստացվել, որ մայրաքաղաքի Թամրուչի փողոցում երկու մեքենաների ուղեւորներ մահակներով հարվածում են միմյանց: Նշվել է նաեւ, որ ավտոմեքենաներից մեկի դիմապակին կոտրած է: Պարզվել է, որ նշված հասցեում անհայտ անձանց կողմից տեղի է ունեցել վիճաբանություն, որը վերածվել է ծեծկռտուքի: Ժամեր անց հիվանդանոցից ստացվել է հաղորդում, որ «կրծքավանդակի կտրածծակած վերք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել 23-ամյա մի երիտասարդ: Պարզվել են ծեծկռտուքի մասնակիցների ինքնությունները:

2-5 ՏԱՐԻ

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԹԵԺԱՆՈՒՄ Է

Պաշտպանության նախարարությունն առաջարկում է վարժական հավաքներից խուսափելու համար խստացնել պատժամիջոցները եւ հստակեցնել զորահավաքային գործընթացում ռազմական ոստիկանության դերակատարումը: Ներկայիս օրենսդրությունը հստակ չի սահմանում վարժական հավաքից խուսափելու տարբեր ձեւերը, ինչի հետեւանքով հնարավոր չի լինում ամբողջությամբ գնահատել քաղաքացիների կողմից այս գործընթացից խուսափելու դեպքերը:

Օրենքի բացերի պատճառով որոշ քաղաքացիներ օգտագործում են ձեւական պատճառաբանություններ՝ վարժական հավաքներից խուսափելու համար: Հատկապես տարածված են ինքնախեղման դեպքերը, հիվանդությունների սիմուլյացիան, փաստաթղթերի կեղծումը կամ այլ խաբեության մեթոդներ: Գործող օրենսդրությամբ պատասխանատվությունը համեմատաբար մեղմ է, ինչը հնարավորություն է տալիս խուսափել պատժից՝ օգտագործելով վերոնշյալ մեթոդները:

Ռազմական ոստիկանության ներկայիս լիազորությունները հստակեցման կարիք ունեն՝ կապված զորահավաքային գործընթացում նրանց ներգրավվածության հետ: Այս փոփոխությունների ընդունումը թույլ կտա խստացնել օրենսդրական կարգավորումները, բարձրացնել պատասխանատվության մակարդակը եւ ապահովել զորահավաքային գործընթացի ամբողջական իրականացումը:

Հստակեցվում են վարժական հավաքներից խուսափելու ձեւերը՝ հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ չներկայանալը, առողջական վիճակի հետազոտումից կամ բժշկական փորձաքննությունից խուսափելը, վարժական հավաքին ներգրավվելուց որեւէ այլ եղանակով հրաժարվելը, մարմնական վնասվածք պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի ճանապարհով հավաքներից խուսափելը, փաստաթղթերի կեղծման կամ խաբեության այլ ձեւերով խուսափելը:

Ընդհանուր խուսափման դեպքերում նախատեսվում է տուգանք, կարճաժամկետ ազատազրկում (մինչեւ 2 ամիս) կամ ազատազրկում (մինչեւ 2 տարի):

Եթե խուսափումն իրականացվել է մարմնական վնասվածք պատճառելու, հիվանդության սիմուլյացիայի կամ փաստաթղթեր կեղծելու միջոցով, ապա պատիժը կարող է հասնել 2-5 տարվա ազատազրկման: Այս փոփոխությունները թույլ կտան խստացնել պատասխանատվությունը եւ նվազեցնել զորահավաքային զորակոչից խուսափելու դեպքերը: Նախագծով առաջարկվում է զորահավաքային գործընթացում ռազմական ոստիկանության ներգրավվածության ավելացում՝ ապահովելով արդյունավետ վերահսկողություն զորակոչի եւ վարժական հավաքների կազմակերպման նկատմամբ:

Ռազմական ոստիկանությունը լիազորվում է օժանդակել զինվորական կոմիսարիատներին զինապարտ քաղաքացիներին ծանուցագրեր հանձնելու գործընթացում, պարտավորեցնել զորակոչիկներին ներկայացնել զինվորական կոմիսարիատ կամ բժշկական փորձաքննության կենտրոն, հայտնաբերել ու վերահսկել զորակոչից խուսափողների տեղաշարժը, աջակցել զորահավաքի կազմակերպմանը եւ զինապարտ քաղաքացիների հաշվառմանը:

Օրենքով ամրագրվում է, որ ռազմական ոստիկանությունը իրավունք կունենա հետախուզել զորահավաքային զորակոչից խուսափող անձանց, իրականացնել անհրաժեշտ գործողություններ՝ զորակոչիկների տեղորոշման եւ զորակոչի ապահովման նպատակով, իրավապահ մարմինների պահանջով պարտադիր զինծառայողների տեղափոխում եւ ուղեկցում ապահովել:

Այս փոփոխությունները թույլ կտան ռազմական ոստիկանությանը ավելի արդյունավետ ներգրավվել զորահավաքային համակարգի գործընթացներում եւ ապահովել զորակոչի ամբողջական իրականացումը: Գործընթացին կներգրավվի ռազմական ոստիկանությունը, որը կուժեղացնի վերահսկողությունը եւ կխթանի օրենքի կիրառելիությունը:

ԻՆՉ Է ՊԱՐՁԵԼ ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Վ. ՔԵՐՈԲՅԱՆԻ ՔՐԳՈՐԾՆ ԱՐԴԵՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՀՀ Քննչական կոմիտեի՝ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանի դեմ հարուցված քրեական գործը հակակոռուպցիոն դատարանում է:

Այդ գործով, նախկին նախարարից բացի, մեղադրյալի աթոռին է նաեւ «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը, որը հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրն է: Երեկ հերթական դատական նիստն էր, եւ դատարան էր ներկայացել նաեւ հայտնի հաղորդավարուհու սկեսրայրը, որը գործով մեղադրյալ է: Նկատենք, որ նրա ընկերության աշխատակիցներից Անի Գեւորգյանը՝ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը, մեղադրյալի կարգավիճակ ուներ, սակայն ընդունել է մեղքը ու գործուն զղջալու հիմքով՝ նրա քրեական գործը կարճվել է:

Իսկ ինչ էր պարզել նախաքննական մարմինը. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայության ձեռքբերման մրցույթի ընթացքում կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ: Մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել են մրցույթի պայմանները, ընդհուպ՝ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ՝ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով ընկերությանը հեռացնել մրցույթից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԵՔԵՆԱ ԵՆ ԹԱԼԱՆԵԼ

Երեկ ավտոմեքենայի թալանման հերթական դեպքն է տեղի ունեցել Կոտայքի մարզում:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի բաժնում տեղեկություններ են ստացվել, որ անհայտ անձը կամ անձինք Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջան թաղամասի 7-րդ շենքի բակում կայանված ավտոմեքենան թալանել են: Պարզվել է, որ թալանել են նշված շենքի բնակչին պատկանող, կայանված վիճակում գտնվող Chevrolet Volt մակնիշի ավտոմեքենան՝ տուժողին պատճառելով մոտ 3 միլիոն դրամի վնաս:

ԾԱՌԵՐ ԵՆ ԿՏՐԵԼ

Երեւանում, անհայտ անձը կամ անձինք փորձել են ծառերի սպանդ իրականացնել:

Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում տեղեկություններ են ստացվել, որ անհայտ անձը կամ անձինք փորձել են Դավիթաշեն 4-րդ թաղամասի վերջնամասում՝ դեպի Զովունի տանող հատվածում գտնվող կանաչ ծառերի սպանդ իրականացնել: Ժամանել են թաղապետարանի, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցներ, ովքեր հայտնաբերել են, որ 3 ծառ մասամբ կտրված է, 2 ծառերի բների վրա էլ միտումնավոր դիզվառելիք է լցված: Աշխատակիցները պատրաստել են զեկուցագիր եւ ներկայացրել են Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին: Նշենք, որ այս տարածքում տարիներ առաջ տիրում էր գարշահոտ վիճակ, ու Երեւանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի եւ Դավիթաշենի նախկին թաղապետ Ռուստամ Բաղդասարյանի ու բնակիչների շնորհիվ տարածքը մաքրվել էր, տնկվել էին ծառեր, իսկ հիմա ինչ-որ ծառասպան կամ ծառասպաններ փորձել են ծառերի սպանդ իրականացնել:

ԳՈՐԾԵՐԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

2024 թվականին Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերով Հայաստանի Հանրապետության ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներից 5-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այս մասին հայտնել են Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտեից:

«5-ը կարճվել է, իսկ ընթացքները դեռեւս չլուծված քրեական վարույթներով իրականացվում է պատշաճ, համակողմանի եւ անաչառ նախաքննություն:

Իրավապաշտպանների տվյալներով՝ 2024 թվականին ոչ մարտական պայմաններում մահվան 35 դեպք է արձանագրվել: Հակառակորդի կրակոցից 4 հոգի է զոհվել:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 149 դեպք, որից 11-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

Ի՞ՆՉ ՎԱՐԱԿ Է ՏԱՐԱԾՎԱԾ

Տավուշի մարզում պայծառ, արեւային, անձյուն եղանակ է: Սակայն մարզում, գուցե ողջ Հայաստանում, շատ տարածված են շնչառական զանազան վիրուսներ: Տավուշի մարզի հիվանդանոցների մահճակալները զբաղեցված են թոքաբորբով հիվանդներով: Հանրակրթական դպրոցներում մեծ թիվ են կազմում հիվանդության պատճառով դասերից բացակայածները: Առողջապահության մասնագետներն ասում են, որ արտառոց ոչինչ չկա, ամեն տարի այս ժամանակաշրջանում նման իրավիճակ է լինում: Սակայն փաստն այն է, որ ավելացել է շնչառական անբավարարվածություն հիվանդությունից մահացածների թիվը: Մահացողները մեծ մասամբ տարեց մարդիկ են:

8 ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔ

Տավուշի մարզպետարանը համապատասխան նախարարությունների՝ ԿԳՄՍՆ-ի եւ առողջապահության նախարարությունների հետ մարզի ընդամենը 2 ոլորտ է ղեկավարում՝ հանրակրթական դպրոցները եւ պետական բժշկական հիմնարկները: Մարզպետարանի հաստիքացուցակը գերուռճացած է՝ մարզպետ, մարզպետի տեղակալներ, օգնականներ, մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար,վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, գլխավոր, առաջատար մասնագետներ եւ այլք: Մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզպետի աշխատակազմում, ըստ հաստիքացուցակի, առկա է 76 հաստիք: 2025 թվականի հունվարի 22-ի դրությամբ մարզպետի աշխատակազմում առկա է 8 թափուր հաստիք: 13 միլիարդ դոլար արտաքին պարտք ունեցող ՀՀ-ն արտերկրից նոր վարկեր է վերցնում, որ անարդյունավետ աշխատող պետական պաշտոնյաներին, այդ թվում՝ Տավուշի մարզպետարանի աշխատակազմին համեմատաբար բարձր աշխատավարձ ու մեծ պարգեւավճարներ տա:

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՈՐ ԿՈՐՍՏԻ ԱՌԱՋ ԵՆՔ

Սահմանազատման անվան տակ միակողմանի, ապօրինի կերպով, գաղտնիության քողի տակ Բաղանիս-Այրումի, Խերմիլիի, Ներքին Ոսկեպարի՝ Աշաղի Ասքիպարայի, Ղզլհաջիլիի, ինչպես նաեւ Կիրանց գյուղի տարածքները Ադրբեջանին հանձնելը, 30 տարի ամրացված պաշտպանական դիրքերը Ադրբեջանին տալը հանգեցրել են Կիրանց-Բաղանիս հատվածում Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի հանդեպ ադրբեջանական զինուժի կողմից վերահսկողություն սահմանելուն: Կիրանց գյուղի ծայրին՝ հարակից դիրքերում, բարձրացված են հայկական եւ ադրբեջանական դրոշները: Միջպետական ավտոճանապարհից մի քանի տասնյակ մետր հեռավորությամբ, 1980-ականների կեսերին Ոսկեպարում կառուցված, այդպես էլ չբնակեցված տների կողքին՝ հայ սահմանապահներից քիչ հեռու, ադրբեջանական դիրքերն են, որտեղից լավ տեսանելի է միջպետական ավտոճանապարհով երթեւեկը: Առաջիկայում Տավուշում նոր սահմանազատում իրականացնելու դեպքում նոր տարածքներ են հանձնվելու Ադրբեջանին, ավելի է վտանգվելու սահմանի այդ հատվածի պաշտպանունակությունը, դա սահմանագոտու բնակչության մեջ հուսահատություն եւ արտագաղթ է առաջացնելու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՐՁՐԱՁԱՅՆՎԵԼ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ՈՒՂԵԳՐԵՐ ՉԵՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Ձմեռային զորակոչի ընթացքում բողոքների հիմնական ուղղվածությունը նույնությամբ մնացել են, խնդիրները վերաբերում են բժշկական հետազոտություններին եւ փորձաքննություններին: Այս մասին «Ի՞նչ խնդիրներ են արձանագրվել ձմեռային զորակոչի ընթացքում» թեմայով քննարկման ժամանակ նշեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անդրանիկ Եղոյանը:

Նրա խոսքով՝ բողոքների մեծամասնությունը վերաբերում է հենց հետազոտություններին, կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացություններին, նաեւ ուղեգրերի տամադրմանը:

«Զորակոչիկները, նրանց ծնողները երբեմն բողոքներ են ներկայացնում, որ առողջական կոնկրետ խնդիրների կապակցությամբ զորակոչիկներին ուղեգրեր չեն տրամադրվում, կամ տրամադրվում են խնդիրների մի մասով միայն: Այս զորակոչին դիմումներ ենք ստացել այլընտրանքային զինվորական ծառայության, եղբայրներին միեւնույն զորամաս ծառայության հետ կապված հարցերով»,- ընդգծել է Եղոյանը:

Վերջինիս խոսքով՝ ձմեռային զորակոչին՝ 2024 թվականի նոյեմբերի 25-ից 2025 հունվարի 31-ը, ստացել են 50-ից ավելի գրավոր, բանավոր բողոքներ, ներառում են նաեւ քաղաքացիներին վերաբերող խորհրդատվությունները: «Շատ հաճախ պետական մարմինների եւ քաղաքացիների միջեւ երկխոսությունը խզվում է»,- ասել է Եղոյանը:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի Պաշտպանության ու անվտանգության ոլորտի քաղաքականության մասնագետ Անուշ Պետրոսյանը նշեց, որ ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցչի կողմից բարձրաձայնված խնդիրները իրենց մոտ էլ առաջնային բնույթ են կրում:

«Այս խնդիրները շարունակվում են, զորակոչից զորակոչ կրկնվում են: Ամենակարեւոր ու ակնառու խնդիրը, որ ունեցել ենք այս զորակոչի ժամանակ, կապված է եղել զորակոչիկների՝ սեփական միջոցներով հետազոտություններ անցնելու հետ, քանի որ բուժհաստատությունները երբեմն հողում են կատարում առողջապահության նախարարության՝ գոյություն չունեցող հրամանին՝ նշելով, որ տվյալ հրամանի առկայության պայմաններում իրենք իրավասություն չունեն զորակոչիկներին սեփական միջոցներով, առանց զինկոմիսարիատի ուղեգրման, որեւէ հետազոտման ենթարկել, որը, բնականաբար, խտրական վերաբերմունք է զորակոչիկների նկատմամբ»,- նշել է նա:

Զինծառայողների խնդիրներով զբաղվող փաստաբան Հայարփի Սարգսյանի խոսքով՝ այս զորակոչի ժամանակ չէին վերացել նախորդ զորակոչերի ժամանակ արձանագրված խնդիրները:

«Ունենք մի շարք խնդիրներ՝ կապված հենց բժշկական հաստատությունների հետ: Թեեւ ուղեգրերով գնում են, հետազոտվում են, այնուամենայնիվ, այդ հետազոտությունների արդյունքում ունենում ենք այնպիսի պատկեր, որ թեկուզ սահմանափակումով ուղարկվում են զորամաս, հետագայում փորձաքննության հարց է առաջանում, տեսնում ենք, որ զինվորն իրականում ի սկզբանե չպետք է գնար ծառայության: Այդպիսի դեպքերը քիչ չեն: Պարզվում են այնպիսի առողջական խնդիրներ, որոնք կարող էին մինչ այդ արձանագրվել: Օրինակ՝ 10 օր առաջ զինվորը զորացրվեց, ուներ գենետիկ խնդիրներ, այդ խնդիրը կարող էր հայտնաբերվել ավելի վաղ ու ի սկզբանե չտարվեր ծառայության: Այդ զինվորը 5 ամիս շարունակ գտնվել է հոսպիտալում»,- կոնկրետ օրինակներով նշել է նա:

Փաստաբանի խոսքով, երբ քաղաքացիական հիվանդանոցները տեսնում են քաղաքացին ուղեգրով է ներկայացել, վերապահումով են մոտենում, չեն ցանկանում իրական պատկերը արձանագրել. «Այդ խնդիրը եղել է, կա: Երբ որ տեսնում են, որ զինվորական ոլորտի հետ են առնչվում, քաղաքացիական հիվանդանոցները որոշակի վերապահումներով են մոտենում: Ինձ այնպես է թվում, որ պաշտպանության նախարարության եւ առողջապահության նախարարության մեջ կա պայմանավորվածություն: Ես այդ ամենն առարկայական եմ տեսնում»,- հայտնել է Հայարփի Սարգսյանը:

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ ԵՆ ՊԱՀԵԼ

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ Այնթապ գյուղի բնակիչ 23-ամյա երիտասարդը պահում եւ օգտագործում է թմրամիջոց: ՔՈԳՎ Արմավիրի մարզային վարչության Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները, Զվարթնոց-Նորակերտ ճանապարհին երիտասարդին ձերբակալել եւ տեղափոխել են Վաղարշապատի բաժին:

Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել են մոխրացած զանգվածով կաթուցիչ եւ մոտ 3 գրամ շոկո թմրամիջոցի նմանվող զանգված: Երիտասարդը հայտնել է, որ հայտնաբերվածը շոկո թմրամիջոց է, անձնական օգտագործման համար ձեռք է բերել «Տելեգրամ» կայքի միջոցով: Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, թմրամիջոց ձեռք բերելու եւ պահելու կասկածանքով ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել Արմավիր քաղաքի բնակիչ՝ 27, 21 եւ 18 տարեկան երեք երիտասարդի:

Անձնական խուզարկությամբ 18-ամյա երիտասարդի մոտ հայտնաբերվել է դեղնականաչավուն, կանեփանման զանգվածով կաթուցիչ: Պարզվել է, որ նա թմրամիջոցը ձեռք էր բերել 27-ամյա երիտասարդից:

Թմրամիջոց պահելու եւ օգտագործելու վերաբերյալ հաջորդ տեղեկությունը նույնպես ստացվել էր Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունում: Տեղեկություն է ստացվել, որ Վաղարշապատի բնակիչ 45-ամյա տղամարդը տան նկուղում թմրանյութ է պահում: Նշված հասցե մեկնած ոստիկանները նկուղում՝ սեղանի տեսանելի հատվածում, նկատել են մարիխուանայի նմանվող դեղնականաչավուն զանգվածներով փաթեթներ: 45-ամյա տանտիրոջ հետ էին նաեւ 30 եւ 31 տարեկան համաքաղաքացի երկու երիտասարդներ: Երեքն էլ ձերբակալվել են:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ նկուղում հայտնաբերվել է 10 փաթեթ՝ ընդհանուր 68 գրամ մարիխուանայի նմանվող զանգվածով: 45-ամյա տղամարդը ներկայացրել է նաեւ 4,7 գրամ բյուրեղանման զանգվածով փաթեթ եւ հայտնել, որ այն կրիստալ տեսակի թմրամիջոց է՝ իր օգտագործման համար: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է դիազեպամ հոգեմետ դեղամիջոցի 10 հաբ, իսկ 31-ամյա երիտասարդի մոտ՝ մարիխուանայի նմանվող զանգված եւ գաղտնի փականով դանակ: Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության եւ Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները, իրացնելով ստացված տեղեկությունները, թմրամիջոց պահելու եւ իրացնելու հիմնավոր կասկածանքով, Խորենացու փողոցում ձերբակալել եւ Վաղարշապատի բաժին են տեղափոխել 56-ամյա մի տղամարդու:

Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է ընդհանուր 2,29 գրամ շագանակագույն զանգվածներով երկու փաթեթ: Նա հայտնել է, որ հայտնաբերվածը ափիոն տեսակի թմրամիջոց է, ձեռք է բերել «Տելեգրամ» կայքի միջոցով: Խուզարկության արդյունքում 56-ամյա տղամարդու տանը հայտնաբերվել է պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ ափիոն թմրամիջոցի նմանվող, ընդհանուր 57,9 գրամ զանգվածով փաթեթներ էին, եւ երկու էլեկտրոնային կշեռք: 56-ամյա տղամարդը իրավապահներին է ներկայացրել ափիոն տեսակի թմրամիջոցով փաթեթ: Պարզվել է, որ նա թմրամիջոցները ձեռք է բերել տարբեր թաքստոցներում տեղադրելու եւ Տելեգրամ կայքի միջոցով իրացնելու նպատակով: Վաղարշապատ քաղաքի 56-ամյա բնակիչը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 6 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՈՐՈՇՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Նախագծի ընդունումը պայմանավորված է Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի պահանջով, ըստ որի՝ էլեկտրոնային առողջապահական համակարգի տվյալների հիման վրա Միասնական սոցիալական ծառայության կողմից ապահովվելու է մայրության նպաստի նշանակումն ու վճարումը: Այս մասին ասել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը: ՀՀ ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում առաջին ընթերցմամբ քննարկվել է ««Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական նախաձեռնությունն ընդունվելու դեպքում կբարելավվի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների նշանակման գործընթացն ու կապահովվի հասցեականությունը. էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա նպաստը կնշանակի եւ կվճարի Միասնական սոցիալական ծառայությունը:

Էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրմամբ հնարավորություն է տրվում չաշխատող անձին մայրության նպաստի համար անհրաժեշտ տեղեկատվության ինքնաշխատ փոխանակման միջոցով նպաստների նշանակման գործընթացն իրականացնել՝ առանց քաղաքացու կողմից տարածքային կենտրոն ներկայանալու եւ փաստաթղթեր ներկայացնելու:

Մանրամասն ներկայացնելով առաջարկվող փոփոխություններն ու լրացումները՝ Դավիթ Խաչատրյանը պատասխանել է պատգամավորների հարցերին: Հիմնական զեկուցողը, անդրադառնալով օրենսդրական փաթեթի ուժի մեջ մտնելու ժամանակահատվածին, համոզմունք է հայտնել, որ մինչեւ սեպտեմբերի 1-ը կապահովվի թվային համակարգը, որն ամբողջությամբ թույլ կտա հարցերը կարգավորել էլեկտրոնային եղանակով: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալն ընդգծել է նախագծի ընդունման կարեւորությունը՝ առաջարկելով կողմ քվեարկել: Նախագիծը ստացել է դրական եզրակացություն:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» 9

ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՓՄՁ-ՆԵՐԸ

«Ամերիաբանկ»-ը 105 մլն եվրոյի ֆինանսավորում է ներգրավել Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հետ գործընկերության շրջանակում, որը ԵՆԲ համաշխարհային ստորաբաժանման (ԵՆԲ Գլոբալ) կողմից Հարավային Կովկասի որեւէ բանկի մեկ գործարքի շրջանակում երբեւէ տրված ամենախոշոր վարկն է: Այս ֆինանսավորումն ընդգծում է «Ամերիաբանկ»-ի եւ ԵՆԲ-ի համատեղ հանձնառությունը՝ մասնավոր հատվածի աճի միջոցով խթանելու տնտեսական զարգացումը եւ նպաստելու Հայաստանի անցմանը կանաչ տնտեսությանը:

Այս գործարքով «Ամերիաբանկ»-ը մատչելի եւ հասանելի վարկեր կառաջարկի միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին ու միջին կապիտալ ունեցող ընկերություններին՝ նրանց հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու բիզնեսի աճի, մրցունակության բարձրացման եւ կայուն նախաձեռնությունների ուղղությամբ:

ԵՆԲ-ի գնահատականների համաձայն՝ այս նախաձեռնության շրջանակում աջակցություն կտրամադրվի շուրջ 400 ՄՓՄՁ-ի եւ կապահովվի ավելի քան 15,000 աշխատատեղ՝ որը համահունչ է հայկական բիզնեսի հնարավորություններն ընդլայնելու ու տնտեսությունն ամրապնդելու «Ամերիաբանկ»ի հանձնառությանը:

«Ամերիաբանկ»ի ֆինանսական գծով տնօրեն Հովհաննես Թորոյանը նշեց. «Ուրախ ենք Եվրոպական ներդրումային բանկի (EIB Global) հետ համագործակցության համար, որով վերահաստատում ենք Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկություններին աջակցելու մեր հանձնառությունը: Այս համագործակցությունը տեղական բիզնեսներին կընձեռի մատչելի ֆինանսավորում ստանալու հնարավորություն, ինչը թույլ կտա բացահայտելու իրենց ողջ ներուժը եւ զգալիորեն նպաստելու Հայաստանի տնտեսական աճին: Որպես Հայաստանի տնտեսության խոշորագույն վարկատու բանկը, որն ունի նշանակալի պորտֆել կանաչ եւ կայուն ֆինանսավորման ոլորտում, ուզում ենք վստահություն հայտնել, որ մենք կարող ենք Հայաստանի համար ավելի կայուն եւ ներառական տնտեսական ապագա կերտել»:

Ֆինանսավորման մի մասը տրամադրվելու է ՀՀ դրամով՝ ՄՓՄՁ-ներին արժութային ռիսկերից պաշտպանելու համար: Եվրամիությունը (ԵՄ) սատարում է գործարքը՝ տրամադրելով դրամաշնորհային ֆինանսավորում, ինչը հնարավորություն է տալիս վարկի համար մատչելի տոկոսադրույք սահմանել: Նախաձեռնությունը համահունչ է ԵՄ-ի՝ ՄՓՄՁ-ներին աջակցելու նպատակի իրագործմանը՝ կայուն, նորարար եւ մրցունակ տնտեսություն ստեղծելու համար, ինչը Հայաստանում Արեւելյան գործընկերության տնտեսական եւ ներդրումային ծրագրի հինգ հիմնասյուներից մեկն է:

«Մենք ուրախ ենք «Ամերիաբանկ»-ի հետ գործակցելու առնչությամբ՝ Հայաստանի մասնավոր հատվածը ամրապնդելու եւ կայուն տնտեսական աճը խթանելու համար»,- ասաց Հայաստանում ԵՆԲ գործունեությունը վերահսկող, ԵՆԲ-ի փոխնախագահ Թերեզա Չերվինսկան: «Այս շրջադարձային գործարքը նշանակալի քայլ է մեր հանձնառության իրագործման ուղղությամբ՝ կայուն զարգացումը եւ տնտեսական կայունությունը խթանելու՝ Եվրոպական Միության (ԵՄ) եւ Հայաստանի առաջնահերթություններին համահունչ»:

«Հայաստանի միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին (ՄՓՄՁ-ներ) աջակցությամբ մենք ընթանում ենք մեր հանձնառությանը համահունչ՝ օժանդակել հայկական մասնավոր հատվածին եւ նպաստել ֆինանսավորման հասանելիության ապահովման հրատապ կարիքի լուծմանը, այդ թվում՝ տեղական արժույթով: Այս աջակցությունը Հայաստանի համար նախատեսված Եվրոպական ներդրումային ծրագրի (EIP) մասն է, որը համապարփակ նախաձեռնություն է՝ ուղղված երկրի տնտեսական աճի, կայուն զարգացման եւ բարօրության խթանմանը: Մենք կշարունակենք այս ջանքերը՝ 2024-2027 թվականներին «Դիմադրողականություն եւ աճ» ծրագրի շրջանակում տրամադրելով ընդհանուր առմամբ 270 միլիոն եվրո: Դրա մեծ մասը կհատկացվի բիզնեսի զարգացմանը՝ հատկապես տեխնոլոգիական ոլորտին, ստարտափներին եւ արտահանման նոր հնարավորություններին, ինչը կնպաստի Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացմանը», - ասաց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը:

Այս գործարքը հաջորդում է Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) եւ «Ամերիաբանկ»-ի միջեւ 200 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորման մասին համաձայնագրին՝ ամրապնդելով բանկի ռազմավարական ջանքերը Հայաստանի կայուն տնտեսական աճին ուղղված միջազգային ֆինանսավորում ներգրավելու ուղղությամբ:

«Ամերիաբանկ»-ը Հայաստանի տնտեսության ամենախոշոր վարկատուն է՝ 1.3 տրլն ՀՀ դրամ ընդհանուր համախառն վարկային պորտֆելով, ներառյալ՝ 270 մլրդ ՀՀ դրամ ծավալով ՓՄՁ համախառն պորտֆելը՝ համաձայն 2024 թ. տարեվերջյան արդյունքների:

Մինչ օրս «Ամերիաբանկ»-ը տարբեր միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավել է շուրջ 1.4 մլրդ ԱՄՆ դոլարի ֆինանսավորում՝ ուղղելով այդ միջոցները Հայաստանում կենսական նշանակության տնտեսական ոլորտների զարգացմանը: 2009 թվականից բանկը միջազգային ֆինանսական կառույցների եւ սոցիալական ներդրողների աջակցությամբ ֆինանսավորել է ավելի քան 250 միլիոն ԱՄՆ դոլարի նախագծեր էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտներում:

«Ամերիաբանկ»-ի մասին

«Ամերիաբանկ»-ը առաջատար ֆինանսական հաստատություն է, ՀՀ տնտեսության նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները կազմում են շուրջ 1.9 տրիլիոն ՀՀ դրամ: Բանկն առաջնորդվում է հաճախորդամետ քաղաքականությամբ՝ թվային ժամանակակից միջավայրում սպասարկման բարձր որակ եւ բանկային փորձառություն ապահովելու նպատակով: «Ամերիաբանկ»-ը որդեգրել է բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությունը՝ նպաստելով Հայաստանի անցմանը դեպի կայուն ապագա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

ՎԵՐԱԲԵՆԴԱՎՈՐԵԼ Է ՎԵԴԻԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ

«Ֆասթ» բանկը վերաբրենդավորել է Արարատ մարզի Վեդի քաղաքում գործող մասնաճյուղը: Վեդու մասնաճյուղը համապատասխանեցվել է ժամանակակից, թվային նորարար լուծումներով չափանիշներին: Բանկում առկա է հերթի էլեկտրոնային կառավարման համակարգ, ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումներ, որոնք թույլ են տալիս իրականացնել կանխիկի մուտքագրում, կատարել վարկերի եւ կոմունալների վճարումներ:

«Ֆասթ» բանկի Վեդու մասնաճյուղի կառավարիչ Լիլիթ Սարգսյանը նշել է. «Սրահը հագեցած է նոր եւ ժամանակակից սարքավորումներով՝ հաճախորդներին ավելի արագ եւ ավելի հարմարավետ սպասարկելու համար: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա շարունակելու ենք աշխատել 24/7 գրաֆիկով, որպեսզի բանկային բոլոր ծառայությունները հասանելի լինեն ցանկացած պահի»:

«Ֆասթ» բանկը շարունակում է նոր մասնաճյուղերի բացումը եւ արդեն իսկ գործող մասնաճյուղերի վերաբրենդավորման գործընթացն ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդը նախորդ տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Վահագն Դավիթի Ջաքարյանս, անհայտ պայմաններում կորցրել եմ Երեւանի պետական համալսարանի կողմից 03.09.2004 թվականին տրված № AB019497 դիպլոմը եւ հավելվածը:

Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 96 000 609 հեռախոսահամարով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿՎԵԼ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է նախարարության ենթակայությամբ գործող թանգարանների տնօրենների հետ:

Անդրադառնալով նախորդ տարի կատարված աշխատանքներին եւ ձեռքբերումներին՝ նախարարը նշել է, որ տարին ոլորտի առաջխաղացման առումով կարեւոր էր. «Ձեւավորվել է «Մշակույթի զարգացման» հիմնադրամը, ընդունվել է «Թանգարանների մասին» ՀՀ օրենքը, ներկայում ակտիվորեն մշակվում են ենթաօրենսդրական ակտերը, որոնք պետք է նպաստեն թանգարանների աշխատանքային գործունեության կարգավորմանը, թանգարանի այցելուների համար որակական փոփոխությունների ապահովմանը: Նախորդ տարվա կարեւոր աշխատանքներից էր նաեւ միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի մշակումը եւ ներդրումը, որն այս տարվանից պետք է ամբողջապես գործի: Տոմսային համակարգի էլեկտրոնային հարթակը բազմաբնույթ համագործակցությունների եւ հաշվետվողականության նոր հնարավորություն է տալիս»: Հանդիպման նպատակն է եղել քննարկել 2025 թվականին իրականացվելիք աշխատանքները, առկա գործընթացներում թանգարաններին ներկայացվող փոփոխություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաեւ ֆինանսական ցուցանիշների հստակեցման, չափելիության, էլեկտրոնային տոմսային համակարգի գործարկման եւ հաշվետվողականության նոր համակարգին առնչվող հարցեր:

Հանդիպման ընթացքում նախարարն անդրադարձել է թանգարանային գործունեության ակտիվացման եւ տեսանելիության բարձրացման կարեւորությանը՝ նշելով, որ այն գործնականում կարեւոր նշանակություն ունի մշակութային կյանքի բարելավման առումով: Նրա խոսքով՝ յուրաքանչյուր թանգարան ունի իր առանձնահատկությունները, որոնց միջոցով էլ ձեւավորվում են թիրախային լսարանները եւ այցելությունները. «Թանգարանների այցելուներին տարբեր ծրագրեր, կրթամշակութային նախագծեր եւ ծառայություններ առաջարկելու ուղղությամբ ակտիվ նախաձեռնողականությունը պետք է զարգացնենք: Այս համատեքստում առկա են միջազգային եւ հայաստանյան թանգարանների բազմաթիվ հաջողված օրինակներ: Մեր թանգարանները հրաշալի վայրեր են բազմաբնույթ ծրագրերի իրականացման, տարբեր ձեւաչափերով գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցելու համար, որը կնպաստի հանրության մշակութային կյանքի հարստացմանը»:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ թանգարանների կապիտալ վերանորոգումների, գույքի եւ սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտությանը: Ժաննա Անդրեասյանը շեշտել է թանգարանային ոլորտի միջազգային համագործակցության զարգացումն ու ընդլայնումը՝ որպես մշակութային ժառանգության տարածման եւ հանրահռչակման կարեւոր բաղադրիչ՝ ընդգծելով նաեւ թանգարանային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման բաղադրիչը: Թանգարանների տնօրենների հետ հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ հեղինակային իրավունքի պաշտպանության, միջազգային համագործակցության ակտիվացման, պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնման, հանրահռչակման, կրթամշակութային ծրագրերի ակտիվացման, բաժանորդային ծրագրի լավարկման եւ ոլորտին վերաբերող մի շարք այլ հարցերի:

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵԹԵ ՀՈՒՋՄՈՒՆՔ ՉԼԻՆԻ, ՈՒՐԵՄՆ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ԱՅՆ ՉԷ»

ԱՐԱՄՈՆ ԵՎ ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՄԵԾ ՀԱՄԵՐԳԻ

Տեւական դադարից հետո Արամոն եւ Էմմա Պետրոսյանը, որոնց մեծ մենահամերգին երկրպագուները երկար են սպասել, փետրվարի 9-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում հանդես կգան հին ու նոր երգերով, լավ տրամադրությամբ եւ անակնկալներով:

Արտիստների վերջին մեծ համերգային երեկոն տեղի է ունեցել 2018 թվականին: «Հետո սկսվեց համավարակը, այնուհետեւ՝ 44-օրյա պատերազմը: Այդ ամենից հետո ո՛չ խոսելու, ո՛չ երգելու ցանկություն կար: Լռությունը հենց այդ մասին էր, որովհետեւ ապրում էինք Արցախի ցավով: Փառք ու պատիվ մեր տղաներին, բայց կյանքը շարունակվում է, ապրել, ստեղծագործել է հարկավոր, ուստի տարիներ անց հասունացավ համերգի ժամանակը», - նշում է Արամոն:

Երեկոյին կհնչեն հեղինակային երգեր, հայտնի կոմպոզիտորների սիրված գործեր՝նոր շնչով, նոր մեկնաբանությամբ:

Արամոն եւ Էմմա Պետրոսյանն ավելի քան երեսուն տարի միասին են: Ապրում են, արարում են, սակայն ամեն անգամ բեմ բարձրանալիս նրանց սիրտը թրթռում է: «Այժմ համերգի նախապատրաստական աշխատանքներն են ընթանում, փորձեր են, անցուդարձ է, եւ այդ սրտի թրթիռն արդեն կա, հուզմունքն ակնհայտ է, ինչը բնական է: Եթե դա չլինի, ուրեմն ինչ-որ բան սխալ է: Պետք է ժպիտ, սեր, ջերմություն, դրական էներգիա փոխանցել հանդիսատեսին, որը եկել է վայելելու երաժշտությունը: Կյանքում եւս պետք է սեր փոխանցել: Տալիս ես այդ սերն ու ստանում ես այն, բացասականն ես տալիս, դա ես ստանում: Պետք է առաջնորդվել սիրով, Աստծո լույսով»,- հավաստիացնում է արտիստը:

Արամոյի եւ Էմմա Պետրոսյանի հետ հանդես են գալու հեղինակավոր երաժիշտներ, սկսնակ երգիչներ:

Բեմում նրանց կընկերակցի դաշնակահար, ջազմեն, ՀՀ ժողովրդական արտիստ Լեւոն Մալխասյանը, որի հետ Արամոն շուրջ տասնյոթ տարի աշխատում է: Նրանք նվագում են ջազային տրիոյում Նիկողայոս Վարդանյանի հետ: Հանդես կգան նաեւ Գարիկ Սարիբեկյան տրիոն, «Երեւան» լարային քառյակը, Gorgeouz Beats-ը, որը, ըստ Արամոյի, հիանալի երիտասարդ է եւ կարողանում է հրաշալի մեկնաբանել հայտնի կոմպոզիտորների սիրված ստեղծագործությունները, ինչպես նաեւ երիտասարդ երգիչներ Հրաչյա Խաչատրյանն ու Նարե Էլիզբարյանը:

«Հրաչյան եւ Նարեն Էմմայի ուսանողներն են: Նարեի հետ կերգեմ ջազային ստանդարտ, իսկ իմ հեղինակային «Կտավ» երգը Էմման կկատարի Հրաչյայի հետ, որն արդեն ավարտել է Առնո Բաբաջանյանի անվան քոլեջը: Նրանց առաջին մեծ բեմելը կլինի մեզ հետ, եւ մենք պարտավորվում ենք աջակցել սկսնակ ու տաղանդավոր երգիչներին, երգչուհիներին, ուստի մեր համերգներին կմեծանա նրանց ներկայությունը: Պետք է ճանապարհ հարթել նրանց համար, ճիշտ ուղու վրա դնել, որպեսզի հայ երգը, երգարվեստն առաջ տանեն»,- ասում է Արամոն:

Համերգին հանդես կգան նաեւ դաշնակահար Մադաթ Ավանեսովը, սոլո կիթառահար Արամ Վարդանյանը, բաս կիթառահար Էդգար Ավետիսյանը, շեփորահար Դանիել Մելքոնյանը, սաքսոֆոնահար Դավիթ Մելքոնյանը, զուռնա, բլուլ՝ Ավագ Մարգարյան, հարվածայիններ՝ Գեւորգ Հարությունյան:

Համերգային երեկոյի ընդմիջմանը գինու եւ շամպայնի հյուրասիրություն է սպասվելու:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԵՆԻՍԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ Է ԸՆՏՐՎԵԼ

Հայաստանի թենիսի ֆեդերացիայի նախագահ է ընտրվել Վարդան Զաքարյանը: Նրա խոսքով՝ մարզաձեւով սիրողական մակարդակով զբաղվում է մանկության տարիներից: «Ֆեդերացիայի նախագահի ընտրությանը մասնակցել է գործկոմի 72 անդամ. ընտրվեց նոր գործկոմ, եւ 72 ձայնով ես ընտրվեցի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում»,- մանրամասնել է Վարդան Զաքարյանը: «Բացի այն, որ շատ եմ սիրում սպորտը, նաեւ մեծ ցանկություն ունեմ թենիսն ավելի մասսայականացնել Հայաստանում: 3-4 տարի շարունակ անդադար կապի մեջ եմ ֆեդերացիայի ներկայացուցիչների, մրցավարների, տարբեր տարիքային խմբերի մարզիկների հետ»,- եզրափակել է Վարդան Զաքարյանը: Նշենք, որ թենիսի ֆեդերացիայի նախագահի հաջորդ ընտրությունը կկայանա 5 տարի անց:

«ՉԵԼՍԻՆ» ՌԵԿՈՐԴ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթին» ձմեռային տրանսֆերային պատուհանի ընթացքում ծախսել է 212 միլիոն եվրո: Կատալոնացի Խոսեպ Գվարդիոլայի գլխավորած թիմը ձեռք է բերել չորս խաղացողի: «Մանչեսթեր Սիթին» կենտրոնական պաշտպան Վիկտոր Ռեյեսի համար վճարել է 37 միլիոն եվրո, կենտրոնական պաշտպան Աբդուկոդիր Խուսանովի համար՝ 40 միլիոն եվրո, կիսապաշտպան Օմար Մարմուշի համար՝ 75 միլիոն եվրո, կիսապաշտպան Նիկո Գոնսալեսի համար՝60 միլիոն եվրո: Մեկ ձմեռային տրանսֆերային պատուհանի ընթացքում ծախսած գումարով «Մանչեսթեր Սիթին» գրանցել է երկրորդ ցուցանիշը պատմության մեջ:

Ռեկորդը պատկանում է Լոնդոնի «Չելսիին», որը 2023 թվականին ծախսել էր 330 միլիոն եվրո:

ԵՐԿՈՒ ՆՈՐ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ՝ ՄԻԼԱՆՈՒՄ

«Ֆիորենտինայի» իտալացի հարձակվող Ռիկարդո Սոտիլը կարիերան կշարունակի «Միլանում»: Ռոսոներիները 25-ամյա կիսապաշտպանին վարձակալել են Ֆիորենտինայից՝գնելու հնարավորությամբ: Սոտիլն իր նոր ակումբում ստացել է 99 համարի մարզաշապիկը:

Ավելի վաղ հաղորդվում էր, որ «Միլանը» իրավունք կունենա գնելու ֆուտբոլիստին 10 միլիոն եվրոյով: Բացի Սոտիլից՝«ռոսոներիները» վարձակալել են նաեւ «Մոնցյի» 20-ամյա իտալացի կիսապաշտպան Կեւին Ջերոլիին: Պայմանագիր նախատեսված է մինչեւ ընթացիկ մրցաշրջանի ավարտը:

● *Փետրվարի 7, 8, 9, 14, 15 եւ 16-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա Գեղեցկուհին եւ հրեշը պատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Վթարից հետո մյուս վարորդն ընդունում է մեղքը, բայց հրաժարվում է դա անել ճՈ տեսուչների ներկայությամբ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Գեւորգ Թադեւոսյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման իրավիճակում անհրաժեշտ է զանգահարել այն ապահովագրական ընկերություն, որտեղ ապահովագրել եք Ձեր տրանսպորտային միջոցը, եւ մանրամասն նկարագրել, թե վթարը ինչպես է առաջացել, որից հետո լուսանկարե՛ք եւ տեսանկարահանե՛ք վթարված մեքենաները, նրանց դիրքերը վթարից հետո, վթարի վայրում առկա անիվների հետքերն ու թափված դետալները: Ձեր ահազանգի հիման վրա՝ դեպքի վայր կներկայանան Ճանապարհային ոստիկանության աշխա-տակիցները եւ կկազմեն համապատասխան արձանագրություն, որի ժամա-նակ Դուք պետք է պահանջեք, որ Ճանապարհային ոստիկանությունն իրականացնի վարչական վարույթ, բացահայտի կարգազանց վարորդին, որը լքել է դեպքի վայրը, եւ ենթարկի նրան վարչական պատասխանատվության: Միաժամանակ անհրաժեշտ է վթարի մասին իմանալուց հետո այդ մասին զանգով տեղեկացնել Ձեր ապահովագրական ընկերությանը:

ՀՀ Ճանապարհային ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե կրկնակի փորձաքննության եզրակացության արդյունքները եւս չգոհացնեն Ձեզ, ապա կարող եք այն վիճարկել դատական կարգով՝ ապացուցելով Ձեր անմեղությունը տեղի ունեցած վթարում: Դատարանում անհրաժեշտ է լինելու ներկայացնել ապացույցներ, որոնցով կհիմնավորվի մյուս վարորդի մեղավորությունը վթարում: Այդպիսի ապացույցներից են նաեւ վթարին ականատես վկաների ցուցմունքն-երը, վթարի վերաբերյալ տեսանյութը, վթարից հետո կատարված լուսանկարները, փորձա--գետի եզրակացությունները եւ այլն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել, եթե ստիպում կամ արգելում են որեւէ հանրահավաքի, բողոքի ակցիայի մասնակցել:

Մարիամ Ստեփանյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հավաքներին մասնակցելուն հարկադրելը կարող է դրսեւորվել տարբեր ձեւերով՝ բռնություն կիրառելով, բռնություն կիրառելու սպառնալիքի ձեւով, գույքը վնասելով: Հավաքներին մասնակցելուն հարկադրելը կարող է դրսեւորվել նաեւ գործատուի կողմից իր աշխատողներին աշխատանքից ազատելու սպառնալիքի ձեւով կամ դրա մասին ուղղակի ակնարկելով: Հավաքներին մասնակցելու կամ, հակառակը, հավաքներին չմասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելը, օրինակ՝ դրամ կամ ծառայություն խոստանալը կամ տալը, նույնպես առաջացնում է քրեական պատասխանատվություն: Մասնավորապես՝ եթե Ձեզ գումար են առաջարկում հավաքին մասնակցելու նպատակով, ապա այդ արարքը գումար առաջարկողի համար առաջացնում է քրեական պատասխանատվություն:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սահմանադրությամբ երաշխավորվում է յուրաքանչյուրի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներին մասնակցելու կամ հավաքներ կազմակերպելու իրավունքը: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունը առավել արդիական է դառնում նախընտրական շրջանում: Քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսվում հավաքների ազատության իրավունքի խախտման համար, այդ թվում՝ նախընտրական շրջանում: Հատկապես տարածված են նախընտրական շրջանում անձանց հավաքներին մասնակցելուն հարկադրելու դեպքերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի



Այսօր տրանսպորտի թանկացման դեմ բոյկոտի 5-րդ օրն է:

Պայքարն օրեցօր թեժանում է, քաղաքացիները՝ մասնավորապես երիտասարդներն ու ուսանողները, ամենուր փորձում են իրենց բողոքի ձայնը բարձրացնել՝ «Չենք վճարելու» պաստառներ փակցնելով, ընդվզման ակցիաներով եւ հասանելի այլ տարբերակներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 - 20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 - 15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 - 2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*